

Աւսուցիչն իւր վարմունքներն վերայ միշտ ուշադրութիւն պիտի դարձնէ։ Նա իւր առաջը բարոյական կատարելատիպ (իդիալ) պիտի ունենայ որ ձգտէ գէպի նորան։ Այսպիսի կատարելատիպը ներկայացնումէ մեր Փրկչի ուսումը։ Այս կատարելատիպն աչքի առաջ ունենալով և ձգտելով գէպի նորան, ուսուցիչն իւր բարոյական կատարելագործութեան մէջ յետ չի մնալ։ Նորան միշտ կը գրաւէ բարոյական բարձր աստիճանն և միշտ ընդարձակ ասպարէզ կը լինի նորա առաջ իւր բարոյական կատարելագործութեան համար։

Բ-Գ-

Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց,

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ.

(Ծ-բ--ն-ի--ն, Աբ-բ-բ 1885 թ. Ա.)

Իննականն լեռնադաշտերն կը հիացնեն զմեզ իրենց տակաւին թարմ ծաղկանց հոտերովը և դալարագեղ մարգագետիններու տեսարաններովը։ Հատ շտապով կը քալենք. ամսոյն 18ին իջանք ի Վարին, յորում տեսնելով Ազգ. հոյակապ Առաջնորդարանն և մի քանի գեղեցկաշէն երկեսո վարժարաններն՝ ուրախացանք ոչ սակաւ։ Վարնոյ Հայք շատ դժբաղդ կը համարեն իրենք զիրենք առանց առաջնորդի մնալնուն համար, որոնց մեծ մասը կուղէ Հայր Օրմանեանին։ Իսկ չուզողները տրտունջ ունէին նորա անտնտեսագէտ լինելոյն ատիւ և փորձառութիւն չունենալոյն համար, որուն առաջնորդութեան ժամանակ Ազգ. Առաջնորդարանը հազար ոսկիէն աւելի պարտուց ենթակայ եղած է կրսնն։

Գալով Սանասարեան մեծահամբաւ Աղա Մկրտիչ Ազգայնոյ անդ բացած վարժարանին՝ զորմէ կրխօսէ ժողովուրդն առհասարակ յափշտակուելով նորա մանկավարժ դասատուների ձեռաց տակ վարժուող աշակերտաց այս տարուան տուած հարցաքննութեանց մասին, ինչպէս մեծ ազդեցութիւն և տպաւորութիւն ըրած էին ունկնդիր ժողովրդեան վերայ նոյնը ըրաւ և իմ՝ վերայ։ Անկարելի է նկարագրել ժողովրդեան երախտագիտութիւնն առ բարերարն վարժարանին, բիւր մաղթանքներն և ի խոր սրտէ շնորհակալիքն. առ այս, կարծեմ, կը պատգաստէին մի շնորհակալեաց ուղերձ ներկայայացնելու Աղա Մկրտիչ Սանասարեանին ընդ միշտ երախտագիտութիւն առ նորին մեծապատուութիւն ցուցնելով։ Միք այս տողերն չը պիտի գրէինք, եթէ պարտք չը գայինք Ճշմարիտ եղելութիւնը հրապարակելու և գիտեմ որ այս տեսակ մարդասիրական հոյակապ գործեր շարունակող հոյակապ անձինք փոփոխութիւն մը չեն կրեր իրենց բնական անփառասիրութեան մասին եղած համեստ, չափաւոր և իրաւացի գովեստներէն։ Արդէն տեղւոյն Ասեմ. Կուսակալին և իրեն հետ երկու փաշաներու, իրենց ստորադասեալ պաշտօնեաներով Օգոստոսի սկիզբները, ի մասնաւորի Սանասարեան Աւարժարանը պայցելութեան գալն Արեւելք հրատարակեց։ Այս վարժարանը այժմ կուսանին հարիւրի չափ տղայք, որոց քառասունէն աւելին ձրիավարժ, յիսունը գիշերօթիկ և տասը երթեւեկ թոշակաւորներ են, որոց ծնողք կրկարծեն որ, ոչինչ կը վճարեն և այժմ շատերը աղաչելով կուզեն վարժարան տալ իրենց զաւակունքը։

այնպէս որ յարկերը չեն բաւեր և սկսած են նոր յարկեր շինել այն Ազգ-
փարժարանին մէջ, յորում պիտի պատասպարուեն մինչև որ պատրաստուած
տեղւոյն վերայ կառուցուի այն հոյակապ փարժարանն, որուն շինութեան
համար կըսեն թէ 15 000 օսմանեան լիւր յատկացուցած է Աղա Մկրտիչ
Սանասարեանը, Կրպատմեն որ հետզհետէ ուսանողաց թիւն պիտի աւելցուի
մինչև հինգ հարիւրը:

Արդի ուսուցիչները երկու են—Պ. Պ. Սարգիս Սողիկեան և Յովսէփ
Մատաթեան, Պ. Ապուլեանն էլ Օգոստոսի վերջերը պէտք էր անդր հասնէր
Տփլիսէն, Սեպտեմբերի սկիզբները նոցա հետ գործի սկսելու համար:

Քանի ուսանողաց թիւը աւելնայ Բարեբարը պիտի հաւաքէ իր սաները, որք
կրգտնուեն ի Ռուսաստան, Կըսիրեմ ըսելու որ այս յուսատու յարկէն ա-
ռանց սպասելու որ մինչև չըջանաւարտ ուսանողք Ազգին ընծայուեն, այսօր
իսկ կըփայլենք նոցին արդիւնքը, Սա մի ամուր պատուար եղեր է բողոքա-
կան և կաթոլիկ մարդոսնների գէմ այժմ, որք մուտ գտած ձն տեղ տեղ
մեր պարզամիտ ժողովուրդները որսալու և պատրելու, Կարնոյ մերայինք կը-
պատմեն այժմ թէ բողոքական և հայ կաթոլիկների զմեզ որսալու միջոց-
ներն տկարացած են, որոնք Սանասարեան փարժարանէն խորտակեալ իրենք
զիրենք տկար կրգտնեն, Այնպէս որ տեղւոյն հայ կաթոլիկաց Ստեփան ա-
նուն եպիսկոպոսը ի նախանձէ շարժեալ, աճապարելով ի Տրապիզոն անդ
ուսումնարան բացող եղուի(մեներէն*) մի քանիսը բերած է ի Կարին, որպէս
զի մի բարձր փարժարան էլ անդ բանան և Սանասարեան փարժարանի յարգը
պակսեցնեն, բայց իզուր, մեր ժողովուրդը կըծիծաղէր նոցա վերայ, 2իմ
ուզեր զանց ընել Խարբերդցի մի նշանաւոր ուսեալ և ազգաւ ասորի հայագէտ
բողոքականի ըսածը, (և որ գրեց և հրատարակեց սոյն փարժարանի այս տար-
ուան հարցաքննութիւնքը Արեւելքին մէջ մի քանի անկեղծ յօդուածներով
Յուլիս և Օգոստոս ամիսներուն), որ կը պատմէր այսպէս, «ևս այժմ կը-
կարծեմ թէ ի Թուրքիա փարժարանի գոյութիւն չըկայ բացի Սանասարեանցի
փարժարանէն, որուն հարցաքննութեանցը երկու շարաթ շարունակ ներկայ էի»
ելն, Ահա այսու մեծ մխիթարութեամբ քանի մը օր Կարին կենալէն զկնի
Օգոստոս 25ին մեկնեցայ անտի գէպի յԱլաշկերտ, քալելով Աերին—Բասե-
նոյ յուռթի դաշտերէն, որոյ հացարոյսերուն և խոտերուն բարդոցներն, անթիւ
ոչխարաց, եզանց և գոմշներու խումբերն կըզարմացնէին, մանաւանդ երկրա-
գործութեան փոքր ինչ ճաշակ ունեցող և անձուկ երկրի մէջ ապրող մարդը:

Տեսանք Աաղարշաւան (Քէփերիւ-քեշ) հայաբնակ գիւղաքաղաքը, որ մերս
Աաղարշակի ծնած և շինած տեղն է, կըսէ պատմութիւնը, որուն մօտ է այն
պանդոկը, որոյ քայքայուած որմոց բնկորներն տակաւին կանգուն կըմնան ի
մեծ զարմացումն անցորդաց և գիտողաց, նմանապէս նորա կերտել տուած
հոյակապ և գեղեցիկաշէն կամուրջը Երասխի գետին վերայ, ուրկէ անցնե-
լու ըսողքն ունեցանք, Կերեւին մեզ Գոմաձոր և Ամրագակայ գիւղերն,

(*) Երանսիայէն աքսորուած

որք ստորին Բասենոյ գաշտին մէջ են. սոքա համեմատարոր չեն հարուստ Վերին Բասենոյ գիւղերէն. Վերին Բասենցիք Վարնոյ մօտ են. որով նոցա արմտիքն դիւրութեամբ կրփոխադրուին ի քաղաք՝ ի վաճառել. Վերջապէս վեց օրէն հասանք ի Վաղարշակերտ աւան (Վաշակերտ), որ կերտուած է ի նոյն Վաղարշակէ. Այս աւանը կրնստի դաւառին Գ.Վ.Ի.Վ. ուր երեք հարիւր տունի չափ բնակիչք կան. 120ը միայն Հայ. իսկ միւսները Տաճիկ և Քուրդ. տակաւին շատ կոշտ են տանց շէնքերն և անցուցած կեանքը. Աստ կայ Միացեալ ընկերութեանց կողմէն բացուած մի վարժարան. Արձակուրդի օրերն դեռ լրացած չէին. դասատուք կրպասէին Տեսուչ Սարիեան Է.Ֆ. ին. զորմէ լսեցինք թէ կողոպտուած է յաւաղակաց. Մուշէն Բաղէշ զնայու ժամանակ. Երկու օր վերջը Պարոն Հայկունոյն հետ իջանք ի Խ.Բ.Ի.Բ. Բագրեանդայ Առաջնորդ Գեր. Յովհաննէս վարդապետի մօտ. որ այցելութեան ելած էր ժողովրդեան. Պ. Հայկունին Միացեալ ընկերութեանց վարժարանը դասատու է. սիրելի և համակրելի անձն. որ փարելի եղած է տեղւոյն մերայնոց իւր անկեղծ և մարգասէր բնաւորութեամբ. Յովհաննէս Վարդապետ ևս սիրելի էր ժողովրդեան. և կառավարութեան առջև աղգեցիկ. իրեն՝ տեղւոյն յարմար ձիրքերովը և քաղաքագիտութեամբ. բայց տրտունջ ունէր իր վիճակէն. որ իրօք արդահատելի և կարի անշուք էր. կրսէր որ. 150 Օսմ. լիրայ տալիք ունի զանազան մարդոց և չորս հարիւր -- Բ. Գորեանի պարտուց տակ ինկած է. զոր սովի տարին տեղական կառավարութենէն փոխառութիւն ըրած և ժողովրդոց բաժնած է. 2օրս օրէն վերջը հասանք Ե.Վ.Ի.Բ. վանքն մեր. ուր երեք օր կենալով՝ աճապարեցինք ի Մուսուն գիւղն՝ Օգոստոս 30ին. Այս հոյակապ հնատիպ վանքն անշուք և աղքատ դրութեան մէջ էր. Եւր նախկին նախանձելի զարդէն և փառքէն մերկացած. զուրկ յուստեքէ օգնութեան մասին. Բացի եկեղեցիէն միւս շէնքերն քակուած քայքայուած են. Սորա միարանութիւնն ալ կարծես իրեն պէս անշքացած է. որ կրքազկանայ Առաջնորդով երեք վարդապետէ. երկու սպասաւորէ և մէկ վարձու վարժապետէ. ի բաց առեալ հոտաղները և մշակները՝ որք կրպարապեն վանքին երկրագործութեամբ տարեկան վարձքով. Յովհաննէս վարդապետ իւր միարանութեամբ և Իււքիլիսէի ժողովուրդը առհասարակ երկիւղով պաշարուած էին. շարունակ կարծելով թէ Պ.Վ.Ի.Բ. ըստած Ե.Վ.Ի.Բ. քրդերը մի օր իրենց չարիքներ պիտի հասցնեն. որք թշնամացած էին պատերազմի ժամանակ վանքին մէջ տեղի ունեցած գէպքին առթիւ. և այժմ ի ներքուստ թշնամի և արտաբուստ բարեկամ են. 1877 թ. Ռուս—Տաճիկական պատերազմին. երբ Ռուսաց բանակը Գենեբալ Տէր Աուկասովի հրամանատարութեամբ Վահարի գեազուկէն յետս կրնահանջէր. Հայդարանցի և Պաշմցի քրդերը. որ գրեթէ մի աշիրէթ են. հոգի առած կրպաշարեն վանքը. ուր հաւաքուած էր Բագրեանդ դաւառի ահաբեկեալ Հայ ժողովուրդը իւր կահ կարասիներով և անասուններով. Այս ժամանակ Յովհաննէս վարդապետը կրկանչէ Պաշմցի աշիրէթին գլխաւոր Բադօ կամ Բագր աղան որ դայ և վանքը պաշտպանէ՝ որպէս բարե-

կամ ըստ ոմանց՝ ժողովուրդը տեսնելով որ փոխանակ պաշտպանուելու կրնեղուն և ի պաշտպանութիւն կոչուած Բաղր—աղայի վարմունքէն կրգուշակեն թէ նա եկած է ոչ թէ պաշտպանելու ինքզ ահաբեկեալները, այլ օգնելու միւս քրդերուն՝ նոցա ասպատակութեանց ժամանակ, առանց Յովհաննէս վարդապետի՝ ինքնագլուխ կրդիմեն Ռուսաց բանակի հիւանդանոցի վերատեսչին՝ օգնութիւն խնդրելով. որ Հայոց փափազը կատարելու ետեւէ լինելով՝ կըսպաննէ վանքին պաշտպան կարծուած Բաղր աղային և նորա արբանեակներուն. իսկ Յովհաննէս վարդապետը կըհաւատացնէ թէ Ռուսաց հիւանդանոցի պաշտօնեան ինքնին պարտաւորեալ եղաւ անձնապաշտպանութեան դիմելով՝ բարեկամ կարծուած Բաղր աղային ըսպանել. Այս գաւառի բնակիչք են Հայ Բուրդ, Պարսիկ, Քրդերը առ հասարակ կը բաժնուին Լէւրեւնէր— (ցեղ) անուններով. որք կը բնակին Բագրեանդայ ամրոցը գաւառին չորս կողմերը. ինչպէս — Սէլէնի, գրաւած են Ալաշկերտի արեւմտակողմը Սուկաւէտ լեւան ստորոտի Ալաշ ըսուած գաւառը դէպի արեւմտեան հարաւ. սղբա գրեթէ մի ամիս առաջ Մանազկերտու Հասանան կոչուած մեծ Եշրէթին հետ պատերազմած ատեն՝ յաղթուեցան և չորս մարդ կորուսին:

Պէլէնի, որք Եւչքիլիսէի մեր վանուց և միաբանութեան թշնամի են դարձած (ինչպէս ասացի) իւրեանց գլխաւորաց՝ ի Ռուսաց սպանմամբն ինոյն վանս. Սղբա կըբնակեն Խարաքիլիսէի հարաւային կողմը դէպի արեւելք տարածուած:

Հոյբ—Եւչի, որք հազար տունէն աւելի են. գրաւած են Ալաշ—Եւչ ըսուած ծաղկալից և ամենալսեմ օդ ունեցող լեռնադաշտը. Նպատ լեւան հարաւային կողմը տարածուած դէպի արեւելք և ամրոցը Չերուայ դաշտահովիտը. ասոնք եթէ կուր ունենան ընդ ումք, Պաշմցիք իրենց օժանդակ կուգան, իրեւ միմեանց ցեղակից:

Խլեւէնի, որ հարիւր տանէ աւելի են. կը բնակեն Պայազետի հիւսիսային կողմը Ռուսաց սահմանին մօտ. որոց բնակավայրը ոչ սակաւ գեղեցիկ է միւսներէն համեմատաբար աւելի հարուստ. — և կրօնքով Եզդի:

Ճեւլէնի, որոնք տարածուած են Մասիս սարին շուրջը, Ռուսաց և Թուրքաց սահմանագլխին երկու կողմերն. Սղբա երկու հազար տունէն աւելի կը հաշուին և Հոյդարանցուց պէս հարուստ չեն. կըսիրեն տակաւին իրենց նախնեաց արհեստը որ է աւազակութիւն. աշխատութեան հետամուտ չեն. Պայ նաև Ալաշկերտի դիմաց ուղղակի դէպի արեւելք, աւելի Ռուսաց քան Թուրքաց սահմանին մէջ բնակուող. մի աշիրէթ Ձելանցի կոչուած, որք առ հասարակ ոչխարի վաճառականութեամբ կը զբաղին քան ուրիշ աշխատութեամբ և շատ հարուստ են. մէկ ալ Աշիրէթներուն նման մարդասպանութիւն և աւազակութիւն ընելու փափաք և վրէժխնդրութեան հետամուտ չեն. Ար պատմեն թէ սոցա հովիւն անգամ կալողէ տարին մինչև հարիւր ոչխար ծախել. Ասոնք իրենց ոչխարների տասնաւոր մեծաթիւ խումբերն ամի ամի կը տանեն դէպի Դամասկոս. Երուսաղէմ և մինչև Եզդիպոտոս ի վաճառել. Սոյն բոլոր Ալեւի քրտերուն կեանքը աղատաշրջութիւն է տե-

դափոխական գատապարտութիւն. իրենք խաշնարածութեամբ կը զբաղուին ընդհանրապէս վրանաշրջիկ կենօք. ասոնց մի փոքր մասը սկսեալ է երկրագործութիւն ընել և հաւանականաբար անցեալ տարիներու սովի օրերէն սկսեալ, որ սարսափահար ըրաւ զիրենք առհասարակ, ճելալցիք և Հայտարանցիք ամրան ամենատաք եղանակին մէջ կը տեղափոխին իրենց վրաններովը Գիատինու (Գիատուն) մօտ Ապաղա (Աբեղեան կամ Ապեղեան) ըսուած ամենասիրուն գրախտահովիտը, ուրկէ կը բղխի Նսիրատը, որուն մօտ կը պատմէին աւանդաբար թէ կը գտնուի Մեծին Ներսէսի ամարանոցը, Այս լեռնադաշտի հարաւային կողմի հովասուն և ձիւնապահ երկար սարին, որ գէպի արեւելք կը ձգի, երկու կողմերը Ապեղեան և Գաբեղեան տանց նախարարութիւնք էին Անգեղտան մեծ նախարարութեան տակ, Գրախտարան կ'որդիք Հայոց:

Բազրեանդայ գաւառն ընդհանրապէս շատ բարեբեր է, նորա հունձքն քանի տարի է շատ առատ կը լինի. երկրագործութիւնը այժմ աւելի ծաղկած է քան երբէք, այնպէս որ, պատերազմին ժամանակ բնակչաց կրած նիւթական վնասներն այսօր անդգալի եղած են նոցա, ինչպէս որ իրենք կը խոստովանեն, Բայց պէտքէ գիտնալ որ տակաւին շատ ծոյլ և անգրաղ են բնակիչք առ հասարակ—դանդաղ և պղերգ և գործ չեն սիրեր, Չմրան վեց և թըր ամիսները պարապ կանցնեն, ինչպէս արբ նմանապէս կանայք և աղջկունք.—ուրիշ երկիրներու նման մանել և գործել չունին, Ծոյլ կը սեմ, վասըն զի բացի հացաբոյսի մշակութենէն ուրիշ ոչ ինչ չաշխատեր մշակել երկրագործը, ուր մինչդեռ կաճեն և կարգիւնաւորին ուրիշ տեղերէն շատ աւելի, բանջարեղինաց ամեն տեսակները, օրինակ—կաղամբ, գետնախնձոր, մեղրապուպ, սեխ, վարունգ, ճակնդեղ, խնձորէն անոյշ շաղգամ, բողկ, սոխ և տեսակ տեսակ համեմներ, Սոցա տեսակներէն ամեն տեղ մշակած էին դուրսէն եկած մարդիկ, զոր ես տեսի, շատ լաւ եղած էին, այնպէս որ խաղողի որթ, բարդիի, թթի և ամեն տեսակ մրգեղինաց ծառեր ալ կաճեն շատ տեղերուն եթէ իրենք ճաշակ ունենան և մշակել սիրեն, յայնժամ պիտի տեսնուի թէ տեղւոյն կլիմայն զգալի կերպով պիտի բարեխառնի, եթէ երբէք պէտք ունի բարեփոխուելու, Սոցա անտարբերութիւնը երկար ժամանակ է ի վեր կարծես իրենց յատկանիշն եղած է դժբախտաբար, Ամենաշնչին բոյսն, որ սօխն է, չեն բարեհաճեր մշակել և կուշտ ուտել, Լազստանէն և Պարսկաստանէն ամեն տարի կը գան մարդիկ և կը մշակեն ամեն բուսեղէնները, յորոց կը գնեն գիւղացիք գողերով և կ'օտերով ցորեան և այլ ինչ տալով, և մեծ ախորժանօք կուտեն, երբ հարցնէք թէ «դուք ինչո՞ւ չէք մշակեր և առատ ուտեր», «բողերը կուտեն» կը պատասխանեն, որպէս թէ մշակող օտարները իրենց նման մարդիկ չեն, Այս երկրին գեղեցիկ օդին, սիրուն դիրքին, ամենազան ծաղկանց անոյշ և զմայլելի բուրումներուն մասին, որք ամեն կերպով անմահական եղևմային դրախտին վայելչագեղութիւնը կը յօրինեն, աւելորդ չեմ համարիր ըսել թէ՛ ճիշտ և ճշմարիտ դրախտը կը պատկերացնեն այցելուին, զորմէ լիովին ծանօթացնելու անկարող իսկ եմ: